

կը նշանակուի վճիռ մ'ալ 1347 կամ յաջորդ տարւոյն մէջնոր դեսպան մ'ալ զրկելու, որ առ ժամն կը խափանուի: կը յիշուի դարձեալ ի գիմաց զքսին թղթոյ մը առաքումն առ թագաւորն Հայոց, ոչ ի ձեռն գեսպանի՝ ինչպէս թուի, որովհետև ֆր.: Տանտոլոյ նէ-կրորոնդի Պայլը զրկեց զայն, ինչպէս կը ծանուցանէ առ գուքսն նա-մակաւն գրեալ ի 1348 յուն. 28, յորում նշանակէ և զգերիլ վա-ճառակիր խալէի կրիմանեանց յԱյաս՝ ի Սրբինոլոյ գենուացւոյ:

Շարունակելի

ՈԱՓԱՅԷԼ ԵԴՈՒԱՐԴ ՂԱՐԱՄԵԱՆ

Յիսուն ու աւելի տարիներէ ի վեր՝ այս մեծախորհուրդ ու բարերար Անձին անունը՝ արժանապէս մեծարուած ու երախտապարտ սիրով հոչակուած է յազգէն, և իր ազգասիրութեան ու լուսաւոր մտաց վրայ սքանչացող յօտարաց. բայց կենսազրուվիւնը սակաւուց թե-րեւս ծանօթ :

կը փափաքինք այս պակասը լեցընել յետագայ էջերով. համո-զուած թէ առաքինութիւնն՝ թէպէտ երբեմն ոչ գովելի նախանձու առիթ, այլ յաճախ նաև նախանձաւորութեան պատճառ մ'է. և բա-րւոյն օրինակը, - հարկ է, - խոստովանիլ ի պատիւ մարդկութեանս ապագայից ոչ լոկ իրաւացի զարմացմանն, այլ և հետեւողութեան ու նմանելու գրգիռ եղած է և խրախոյս:

Այս մողով կը հրատարակենք հետեւեալ քանի մը տեղեկութիւն-ներն Ռափայելի եղուարդայ վարուց վրայ, փափաքելով որ ինչպէս անունն անմահական է՝ առատաձեռն տրովքը հաստատած դաստիա-րակութեան սրբավայրին մէջ, գովութիւնն ալ յարատե ըլլայ բա-րեմոյն և երախտագէտ սանիցը՝ վարուց, կրթութեան և ուսմանց յառաջադէմ զարգացմամբը :

Հարամեան հին տոհմին սերունդ է եղուարդ Ռափայել: — Ուս-տի կամ երբ եղած է այս տոհմին սկզբնաւորութիւնը:

Այս նկատմամբ՝ դժուարին է մեզ վաւերական և ճիշտ հաւաս-տեաց հանդիպիլ և հաղորդել ընթերցողաց: Երկարատե գերու-թեան, ու անդադար պատերազմաց և աւարառութեան ասպարէզ Հայաստան աշխարհ, չէ կրցեր նաև եղուարդայ Ռափայելի ազնուա-կան հնութեան տոհմազրութիւնն պահպանել կամ հասցընել մինչև առ մեզ:

Սակայն անտարակուաելի կը թուի թէ Հարամեանց ազգատոհմը փառաւոր անցեալի մը հետ ունեցած ըլլայ նաև իր հին իշխանական ազնուականութիւնը: Եւ թէպէտ, ինչպէս կանխեցինք ըսել, վաւե-

բականք կը պակսին, այլ ազգերնուո մեծանձն բարերարն Ռափա-
յէլ Եղուարդ՝ իր սրտին և զգացմանց պատիւ ընող ջանքով մը՝ փա-
փաքելով որ իր «ըգւոցը ոչ միայն մեծահարուստ ստացուածքը, այլ
իրենց կրած անուանն ալ պատիւն ու պատմութիւնը աւանդել, գո-
վելի հետաքննութեամբ այս նկատմամբ դտած տեղեկութիւնները
գրի վրայ առեր և աւանդեր է որդւոցը»:

Այս թուղթը քիչ ետքը պիտի ընթեռնունք իր գրչովը և Եղուի
պարզութեամբ:

* * *

Հայաստան աշխարհի Գանձակ գաւառին մէջ ցիր ու ցան բազմա-
թիւ կիսաւեր և կիսակործան եկեղեցեաց ու վանորէից հետք՝ դեռ
ինչուան հիմայ կը հանդիպին հետաբնին ուղեւորին, անցեալ փա-
ռաց և շինութեանց վկայք և յուշարարք. «Յորս հոչակաւոր և ա-
նուանի է, — կ'ըսէ մեզի ժամանակաւ մերձաւոր ականատես ստորա-
զիր մը, — մենաստան Զարեկայ անուանեալ անապատն, որ է կա-
ռուցեալ ի ձորամիջի Զարեկայ զետոյն, ի մէջ անտառախիտ մայ-
րեաց և պտղաբեր ծառոց, յեզր զետոյն Զարեկայ, ի վայելուչ տե-
ղով կառուցեալ ի սկզբան եօթնետամներորդ դարուն ի Դաւիթ
արքեպիսկոպոսէ Ղարիմանեաց. զոր յիշէ Առաքել պատմիչ եօթ-
նետասաներորդ դարու յէջն 280 (տպ. Ամսդերտամի). «Դաւիթ
եպիսկոպոս էր ի Շամքոռու ձորէն, ի ցեղէ իշխանացն զոր Ղարիմա-
նեանց կոչեն։ Սա եկաց մեծ անապատն, և ապա ելեալ գնացի ձորն
Շամքոռայ, շինեաց զանապատն զոր կոչեն Զարեկագետի անապատ,
որ բազմաժողով եղբարց բնակութիւն է, յոյժ հաստատուն ամենայն
կարգօք և սահմանօք անապատի մինչև ցայսօր, և ինքն Դաւիթ ե-
պիսկոպոս անդէն վախճանեցաւ և անդէն թաղեցաւ։ Գերեզման
նորա մինչև ցարդ կայ եկեղեցւոյ յարեելեան կողմն արտաքուստ՝
հանդէպ աւագ խորանի. երեխ ի վերայ նորա մատուռ իմն շինեալ
ըստ վաղեմի սովորութեան. այժմ վիշալ և ընդ հողով էր ծածկեալ
մեք բացաք զերես տապանավիմի՝ որ ել զոյզս տապանաքար, յորոց
միոյն զրեալ զայս տապանագիր, Այս է հանգիստ Դաւիթ եպիսկո-
պոսի որ փոխեցաւ առ Քրիստոս ի բռնին ՌՂԲ. Եկեղեցին շինեալ
ի Դաւիթ եպիսկոպոսէ է մայր Եկեղեցին Զարեկայ անապատին,
ան հարթ քարտմքը, բաւականին ընդարձակ, ի վերայ չորից ստուար
քառակուսի սեանց. և սիւնքն են նմանապէս մանր անհարթ քա-
րինք, սաստիկ եռացուցեալ կրիք ընդ միմեանս. ունի երեք պահա-
րանս, երեք գուռոս, մին արեմուեան՝ յոյժ ընդարձակ. երկուսն փո-
քըր, մին ի հարաւ կոյս, և միւսն ի հիւսիսային արևմուտս»⁴:

4 Այսարաւ, ամսագիր Եջմիածնի, 1882, էջ 270.

Եղուարդ Ռափայէլ ինքնագիր համառօտ տոհմաբանութեանը մէջ՝
Առաքելի յիշած Ղարամաննենց սերունդ կը համարի իրենց ցեղը։

«Գոհանամ, կ'ըսէ, ի Տեառնէ զի ետ ժամանակ և կարողութիւն
բաւական՝ խորհել ի վերայ նախնեաց իմոց . վասն այսորիկ ի վերջն
տարւոյս ըստ սովորութեան իմոյ հարկաւոր վարկայ շարել ի վերայ
թղթի զյիշատակս նոցա որչափ միան իմ՝ ձգտէր և աւանդութեամբ
լուեալ էի . այսու գիտաւորութեամբ զի ծանիցեն օրդիք իմ թէ
յորմէ իցեն սերեցեալ, կամ ոյք իցեն նախնիք իւրեանց . վասն զի ի
կատարեալ հասակի իմոյ ես յոյժ բաղձայի գիտել յաւելի քան զայն
զորս գիտեմ այժմ . վասն այսորիկ թուի ինձ թէ օրդիք իմ եւս
ցանկանայցեն գիտել . այսու մտածութեամբ սկիզբն առեալ ի մեծ
հաւուն իմոյ՝ սկսայ գրել ազգահամարութիւնն իմ մինչև ցորդիսն
իմ։ Այս ինքն մեծ՝ հաւ մեր, որ է հաւ հաւու իմոյ, անուանեալն
Խաչիկ Ղարամաննեանց ձնեալ ի գեղն Արրանելի գաւառին Նախի-
ջեւանու, որպէս ընթերցեալ է իմ ի Առաքել պատմագրքի ի 250
թղթահամարն, զորս գրէ այսպէս . = Եւ Դաւիթ Եպիսկոպոսն, = և
այլն . այսու մտածելի է թէ ցեղն Ղարամաննեանց՝ ազնիւ իցէ լեալ ի
Հայս, և ցեղ մեր իցէ . քանզի ոչ է իմ լուեալ մինչև ցայսօր այլ ցեղ
Ղարամաննեանց յազգի իմում, և հաւաստեաւ ոչ գիտեմ թէ ի ժա-
մանակի աւերման աշխարհին Հայոց ի թագաւորէն Պարսից մեծին
Շահպասայ, և վարելոյ ազգս մեր ի Նորն Զուղայ մերձ մայրաքաղա-
քին Սպահանու և բնակեցուցանելոյ անդ՝ սոյն այս մեծ հաւս մեր
ընդ նոսա եկելոցն իցէ, թէ առ յապայն գայ և բնակի անդ, ի Նորն
Զուղայ . և յետ բնակութեան իւրոյ անդ՝ ծնանի օրդի մի և անուա-
նէ Ղարամ . և ամուսնացուցանէ ընդ մի ի գստերաց իւրում ընտա-
նոյ՝ անուաննեալ Բէկիա . և Ղարամ ծնանի օրդի մի և գստերս եր-
կուս . անուն օրդւոյն կոչէ Խաչիկ Ղարամաննենց՝ որ է հաւ իմ . և
յայսմ միջոցի՝ իրեւ յամին 1650 մեռանի Ղարամ և կին նորա, և
օրդի Ղարամին՝ կոչեցեալն Խաչիկ՝ զոլով ի հասակի պատաննեկու-
թեան անտէրունչ՝ ծախէ ամենայն ստացուածս հօր իւրոյ և աղ-
քատանայ, և նեղեալ ի չքաւորութենէ՝ ելեալ գայ ի Հնդիկս, և
բազմազան աշխատանօք շրջի ի պանդխտութիւն ի Մանելոյ, ի Զին,
ի Բանկալայ և յայլ տեղիս, մինչև թիւն 1690, դոյզն ինչ յաւելի
կամ պակաս՝ և յաջողութիւն դտեալ՝ գառնայ ի հայրենիս իւր ի-
րրու վեց հաղար թուման հարստութեամբ : Ամուսնացեալ անդ ընդ
մի ի գստերացն Աղայ - Ֆրանոսենց՝ անուաննեալ Խանումշան . և ծը-
նանի ուստերս, երիս և գստերս երկուս. անուն ուստերացն՝ երիցումն
կոչէ Ռափայէլ, երկրորդին Ստեփաննոս, և կրտսերն Ոհաննէս : Եւ
ամուսնացուցանէ երէց օրդին իւր կոչեցեալն Ռափայէլ՝ որ է հայր
իմ, ընդ գստեր Ոհաննէս Խոջամալին Զախաթունենց՝ կոչեցեալ Նա-
նաջան : Սա Նանաջան՝ ունելով մայր անուաննեալ Մերիան՝ սերե-

յեալ ի ցեղէ Շէրիմանենց, որ էր դուստր Յարութիւն Շէրիմանին. և հաւ իմ Խաչիկ՝ յետ ամուսնացուցանելոյ որդին իւր Ռաֆայէլ առաքէ ի Հնդիկս ի Մագրաս՝ ի հապատակութիւն աներոջ իւրոյ Ռհաննէս Խոջամալին, որպէս զի պաշտպանութեամբ նորա յառաջասցի ի գործ վաճառականութեանն: Յայսմ միջոցի մեռանի հաւ իմ Խաչիկն Ղարամանենց ի Զուղայ իրը ամաց նսունից. և յետ փոքր միջոցի կին նորա Խանումջան. և տեսեալ մայրենի հաւուն իմոյ Ռհաննէս Խոջամալին թէ չեղն ծնունդ գատոեր իւրոյ՝ առաքէ հայրն իմ ի Զուղայ իբր յամին 1730. և գնացեալ հօր իմոյ անդ ի Զուղայ՝ ծընանի ուստերս երկու և դուստր մի. երէց որդին իւր անուանեալ Լուիս՝ փոխի յաստեացս ի նորաբոլբոջ հասակի. և կրտսերն՝ անուանեալ Հետվարդ, որ եմ ես. և դուստր իւր անուանէ Մատլինայ՝ որ է քոյր իմ. և յամին 1745 վախճանի հայրն իմ Ռաֆայէլ ի Նորն Զուղայ, և թաղի ընդ հարս իւր. և մայրն իմ տեսեալ թէ է այրիացեալ և անտերունչ մնացեալ, և գոլով ի վանդի աշխարհն այն՝ առաքէ ինձ ի Հնդիկս, յանձն արարեալ հօր իւրոյ Ռվիաննէս + ուջամոլին. և յետ փոքր միջոցի գալստեան իմոյ՝ պատրաստի մայր իմ ընդ քեռ իմում, և ելեալ գայ ի Հնդիկս, և բնակի ընդ հօր իւրում:

«Եւ ի հասանիլն իմ ի Հնդիկս՝ հաւն իմ եղ ինձ ի դպրատուն Գաղղիացւոց ի Փոնտիշէրի, և վախճանեցաւ յինքն յամին 1760, յամսեանն յունվարի չորրորդին: Յայսմ միջոցի պատահեցեալ պատերազմն ի մէջ Անդղիացւոց և Գաղղիացւոց՝ պաշարեցեալ էր Փոնտիշէրի ի Անդղիացւոց. մայրն իմ կամելով աղատել զիս ի վըտանդէն, նոյն թուով օգոստոսի 44 երորդին առաքեաց զիս ի դուրս՝ երթալ ի Գութնուր. ուր պատահեցայ այլ իմն մեծի վանդի գանգի, Քանզի ի ճանապարհի հասին ի վերայ իմ գողք և Մարաթայք առ ի կողոպտել զիս. ի լուսանալ Հնդետասաներորդ աւուր ամսեանն օգոստոսի՝ հարին սրօք և կտրեն զձախու ձեռն իմ. և կողոպտեցին զամենայն ինչս իմ, և թողին զիս իբրեւ մեռեալ ի ճանապարհի. որ էի ի ամաց վեշտասանից: Անդ ձկնորսք տեսեալ ինձ և գթացեալ ի վերայ իմ՝ առեալ տարան զիս ի Փոնտիշէրի. և տեսեալ մօր իմոյ՝ կոծ մեծ արար ի վերայ իմ և ի վերայ անխոհեմ մտածութեան իւրոյ, զի եթող զիս անպատրաստ ելանել ի Փոնտիշէրու:

«Յայսմ միջոցի սաստկացեալ պատերազմն՝ Անդղիացիք տիրեցին զՓոնտիշէրի, որ ի թուին 1765, յունվարի 6. և վասն կորուսանելց քաղղաքին՝ կորուսաք և մեք տուն և ամենայն ստացուածո մեր, և աղքատացաք՝ զորս փոքր աւուրբք յառաջ հարուստ էաք և մեծատուն, և եկեալ բնակեցաք ի Մագրաս: Տեսեալ տարարազդութիւնն տան իմոյ՝ սկսայ վաստակիլ և վաճառականութիւն առնել ի Զին, ի Մանիլա և ի Բանկալայ և յայլ տեղիս. մինչև տեսեալ իմ թէ բարերարն օրհնեաց զվաստակ իմ՝ ամուսնացայ յամին 1772 ընդ դստեր

Զահուկեցի Զորհացակերենց Ատեփան Մանուէլին՝ անուանեալ Մարիամ. և ծնայ ուստերս երիս և դստերս երկուս. ուստերք՝ Աղեքսանդր, Ոհաննէս և Ատեփաննոս. և դստերք՝ Աննա, և Աննա Մարիամ. զորս աղաչեմ ի Տեառնէ շնորհել սոցա իմաստութիւն, որպէս զի զարգանայցեն իմաստութեամբ և բարի վարուք ի փառս Ուստուծոյ և ի միմիթարութիւն ինձ. բաւ է » :

Հմուտ և հետաքնին ազգային բանասէր մ'ալ, Յովհաննէս Յարութիւնեան Նոր Զուղայեցի, իրմէ շարազրուած՝ Հայրենի երկրին պատմութեանը մէջ, ճոխութեամբ ու փառօք հօն փայլող և բարգաւաճ ընտանեաց և տոհմից վրայ խօսելով, Ղարամեանց վրայ ալ հետեւեալ տեղեկութիւնները կու տայ. « Ղարամեանք, կ'ըսէ, հռովմէական եկեղեցւոյ ժողովրդականք, ըստ փաճառականութեան մասին փարթամ յոյժ : Յարենելեան կոյս հանգստարան/ն Զուղայու՝ կայ գերեզման աղայ Ռաֆայելի Խաչիկ Ղարամեանց : Ճուն նոցա էր ի Զարսութազի, որ այժմ յայգի փոխակերպեալ՝ կայ ի կուսանաց կառավարութեան »⁴ :

* * *

Այն ասեններն (1774) յուխտին Մխիթարոյ որ ի Վենետիկ՝ բաժանում մը հանդիպեր էր. որով ոմանք ի միարանից՝ ի Թրիեստ նոր վանք ու դպրատուն մը կառուցանելու ջանքով ու ծախիւք, զըրամական մեծ նեղութեան ու տագնապի մէջ ինկած էին : Հարկ էր իրենց դիտանն ու նպատակին հասնելու և այդ առժամանակեայ տագնապէն խալըսելու համար՝ ազգ ային բարերարաց օժանդակութեանն ու ձեռնտուութեան դիմել. և այդ վախճանաւ՝ երկուք ոմանք՝ որ այն ատեն բաժանելոց համախոհք կարծուած էին, և փափաքելի կրկին միութիւնը իրականացընելու համար՝ գրամական անձկութենէն խալըսիլը անհրաժեշտ և զլիսաւոր պայմաններէն մէկը կը համարէին, Բուզայեան Հ. Նիկողոյոս և Մէհէրեան Հ. Պօղոս վարգապետք, միջնորդ և աղաչաւոր ըլլալ յանձն առած էին՝ հեռաւոր Հնդկաց աշխարհին մէջ բնակող հայազգեաց, յորս անուամբն, աղղեցութեամբ և նիւթական ընչից ճոխութեամբ նշանաւորներէն էր ի ժամանակին իդու արդ Ռաֆայել Ղարամեան :

1785 իժուականաւ նամակ մը կայ ձեռուընիս՝ որ ի Թրիեստ հաստատող Մխիթարեանց 1783 սեպտեմբեր 7 առ նա ինքն եզուարդ գրած թղթոյն պատախանն է : Այդ նամակին հետեւեալ տողերն՝ մասնաւոր մոազրութեան արժանաւորք են, յայտարարք իր մեծ ոգւոյն, եռանդուն և լուսամիտ ազգասիրութեան :

« Յիրաւի, կ'ըսէ, յոյժ ցաւիմ սրտով, տեսանելով զտառապելութիւնն ազգիս մեր և զթշու առութիւն ազիտութեանն, որով ոչ ինչ բան գրգռէ նախանձ մեր առ միաբանութիւն՝ բայց վիճմունքն հաւատոյ ընդ միմեանո եղրարց . որով վաստակն մեր ձրի վատնեմք և տամք . . . և վախճան բանին՝ ոչինչ շահիմք, բայց եթէ ամօթանք, նախատինք և աղքատութիւն . . . Ո՛վ ազգքանիմաստք, բաւական լեռուք անմտութեան ձեր, միաբանութիւն, և նախանձաւոր լերուք վասն տառապելութեանն մեր, և վաստակն մեր տացուք վասն գտանելոյ զզիտութիւն, որում է գուռն արիութեան . . . Հաւաստի գիտեմ որ գրելովս շահիմ ոչինչ, բայց ցաւելով մաշիմ . . . և համարձակիմ ասել զփոքը ինչ ի գերազանց կարդացողացն մերոց, որք են ի յեկեղեցիս մեր : Վասն որ ի յաշխարհականս ոչ գոյ կարդացողութիւն, ոչ ներհակիմ, խոստովանելով զի պարտին նախ հաւատն Քրիստոսի ուղղաքարոզել, և տպել զզիրքս սուրբ . բայց ճանաչեմ և գիտեմ լի ունիմք բաւականն : Այդ պարտ է լոյս ածել զզրեանսն, զորս խթէ զառիթ նախանձ ազգասիրութեան, և արիութեան, և այլն : Գիտեմ զի պատասխան տացեն՝ թէ ով ոք ետուն մեզ զծախն՝ զի ոչ արարաք, այլ յայտնի գիտեմ զի ի Հնդկաց ել բազում արծաթ՝ ի մի և իմիւս կողմն եկեղեցեաց, վասն տպազրութեան զրոց պատմութեան, և վախճանն տեսաք ոչինչ, բայց զսաղմոս և զժամագիրք և զայլ : Աղաշեմ չգիտիցէք զիս գոլ լութերեան, այլ եմ ուղղափառ. բայց կամիմ և ցա՛ կամ լինել ուղղափառ՝ որպէս Մակարեանքն, թէ աշխարհօրէն՝ չասեմ ամերիկեանք . բաւ է » :

Այս սրտով ու փափարով թէ իրենց դրամական կարօտութեան օգնելու, և թէ ազգին մոտաւորական զարգացման ու յառաջադիմութեան սատարելու մոքով՝ կ'առաջարկէ հարց, Ռոլէն գաղղիացւոյն Հռովմէական պատմութեան և Հնախօսութեան հայկական թարգմանութեան ձեռք զարնել: Պատանեկութեան հասակին՝ Փոնտիշէրի Գաղղիացւոց դպրոցէն ուսումնաւարտ արձըկուելէն ետքը՝ այդ գրբերն, որ ի ժամանակին մեծ յարգ ունէին, անցեր էին ձեռքը, և անոնց ընթերցմամբ մեծապէս զուարճացած և օգտուած : « Ունէի, կ'ըսէ, ի սրտի իմում զուխտ առ ի լոյս ածել ի բարբառ մեր . վասն որ տեսանէի զօգուտ գոլ ընթերցողաց . այս ինքն՝ թէ սահմանի կառավարութեան, թէ ազգասիրութեան » : Այդ թարգմանութիւնն անխափան և փութով ի զլուխ տանելու և տպագրութեամբ հատարակելու համար՝ երկու վերը յիշուած վարդապետաց հետ դաշնագիր կ'ըլլայ, « և ետու, կ'ըսէ, այժմ ի ձեռն վերոյասացեալ վարդապետացն ութն հազար (8000) ոռոգի . որ սորին հինգ հազարն իմ տուեցեալն է . երկու հազարն օգնական եղի պարոն Միքայէլ Տէր - Ռհանեան, հազար ոռոգի պարոն Յովհաննէս Տէր - Յակոբեան . որ եղեւ ասացեալ բոլոր 8000 ոռոգի ստակն՝ շահիվարի մին-

չե Փորթոկալն՝ Լիզպոն, Հարիւրին քսան... որ յետ Աստուծով
անվասա Լիզպոն համելէն՝ աւելանայ ստակն մօտ տասն հազար
ռուփի ։ Առաջին հատորին տպագրութենէն հոգը՝ կը խոստանայ
հինգ հազար ռուփի ալ տալ, և բոլոր վաճառման շահը թողով ի նը-
պաստ վանքին, միայն մէյմէկ օրինակ պահանջելով երեք բարերա-
րաց համար զորս յիշեցինք : Հաշիւ կ'ընէ, և ենթադրելով թէ ինչ-
պէս իրեն՝ տասնկ ալ բովանդակ ազգին պիտի հաճոյ անցնին այն գը-
րոց թարգմանութիւնը, կը համարի թէ անոնց տպագրութեամբ և
վաճառմամբ՝ 75,000 ռուփիի զրամական օգնութիւն մը ըլլայ վան-
քին . « Արդեօք կատարի՞՝ կ'ըսէ, սովաւ ցանկութիւն ձեր, որ էր ի
յօգնութիւն գտանել ընդ մեզ. և ցանկութիւնն իմ՝ որ էր լուս ա-
ծել ի բարբառս մեր զպատմութիւնն այն . ուստի գտանեմք միփ-
թարութիւն ի յերկուս կողմն : Եւ յետ այսորիկ մինչ լինի կատա-
րումն իմոյ փափաքին ընդ ձերոյ արդեամբ, յոյս ունիմ թէ Տէրն
կեանք պարգետացէ զիս, օգտակար լինելն և միշտ հաւատարիմ առ-
ձեղ կենալս, ընդ ամենայն զորս ինձանէ գուցէ կարեոր՝ ոչ խնա-
յեմ. անհոգ լերուք :

Ուրիշ առաջարկութիւն մ'ալ կ'ընէ, իր սրտին մերձաւորագոյն
ու ամենակարեսր փափաք մ'ալ յայտնելով . իր որդւոց գասախա-
րակութեան գործը : Այս նպատակին համելու համար կ'ուզէ որ
Բուզայեան և լինի վարպետ որդւոցս իմոց, և գնալ և մնալ ընդ նո-
սա առ լօնտոն . քանզի կամիմ զի որդիքն իմ մոանելի յուսումնա-
րան, և վարժել զլեզուս ինկլիզի . ընդ ապահովութեան գերյարգե-
լոյն լինիմ անհոգս առ ի հաւատն և ի լեզուն մեր սեպհական :
Վասն որոյ աղաչեմ զգերյարգելեացդ՝ զի լիցի ի կամս ձերոց հաճո-
յից զյառաջաղ րութիւնս իմ, մանաւանդ եթէ Տէրն կամիցի և զար-
գացուացէ զորդիքն իմ... լինի արդիւնք ձեր ի վերայ որդւոց իմոց,
և նոքա զձեղ ճանաշեն որպէս հարք, ընդ որս գիտեմ ի կարծիս
իմ, ունենայք կենդանի զանձ և օգնական ի վանքիդ, քան զսնոտի և
մեռեալ ժանկն և արծաթ՝ որ կամիք ի մեզմէ օգնութիւն ։

Նոյն նամակին մէջ ազնուախոհ սրտին ցան ալ կը յայտնէ՝ յիշեալ
վարդապետաց ի Մխիթարեանց Վենետիոյ բաժանման վրայ . որ
թէպէտ յապագային բազմարդիւն և բազմավաստակ հաստատու-
թեան մը պատճառ եղաւ, սակայն համամիտ միութեան ու սիրոյ
մէջ ազգին ոյժը և յառաջադիմութիւնը տեսնել փափաքողաց և սի-
րողաց համար՝ այն ատեն ցաւալի ու անհաճոյ դէպք մը երեցած էր
արդարապէս : Ու կը վերջացընէ նամակն՝ սրտեռանզն մաղթանք մը
ուղղելով առ նա ինքն Մխիթար աբրայ, և աղաչելով որ խաղաղու-
թեան ու միաբանաօիրութեան ոգին տարածէ, սփոէ ու արդասա-
ւոր ընէ իր մեծ անունը կրող աշակերտաց մէջ:

Շարութեակելի